ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Սամվել Ավետիքյանի՝ Ռուսաստանի Դաշնություն կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Սամվել Ավետիքյան

2. Զբաղեցրածպաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2017թ.հոկտեմբերի 25-27-ը,

4. Հրավիրողկողմը՝

Ռուսաստանի Դաշնության ֆեդերալ մաքսային ծառայություն:

5. Գործուղման նպատակը/աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

«Մաքսայինծառայություն 2017» խորագրով 18-րդ միջազգային ցուցահանդեսին մասնակցություն:

6. Քննարկված թեմաները՝

«Մաքսային ծառայություն 2017» խորագրով 18-րդ միջազգային ցուցահանդեսին մասնակցում էին ԵԱՏՄ անդամ-երկրների մաքսային ծառայությունները, Ռուսաստանի Դաշնությունում հավատատարմագրված մի շարք երկրների մաքսային կցորդներ, ինչպես նաև Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիայի գլխավորած պատվիրակությունը: Ցուցահանդեսին ԵԱՏՄ անդամ-երկրները ներկայացնում էին իրենց մաքսային ծառայությունների վերջին տարիների ձեռքբերումները, տեղեկատվություն տրամադրում իրականացրած բարեփոխումների և նոր ծրագրերի վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության կողմից ցուցահանդեսին մասնակցել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի

պատվիրակությունը՝ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Սամվել Ավետիքյանի գլխավորությամբ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության տաղավարում հանդիպումներ են տեղի ունեցել ԵԱՏՄ անդամ-երկրների մաքսային ծառայությունների պատվիրակությունների հետ: Երկկողմ հանդիպումներ են տեղի ունեցել նաև ՌԴ մաքսային ծառայության ղեկավար Վլադիմիր Բուլավինի և առաջին տեղակալ Ռուսլան Դավիդովի հետ: Հանդիպման ընթացքում ՀՀ մաքսային ծառայության ներկայացուցիչները ներկայացրել են վերջերս արդիականացված հայ-վրացական սահմանային անցումային կետերում իրականացված աշխատանքները, դրանց արդյունքում մի շարք չափանիշներով արձանագրված դրական ցուցանիշները, ապրանքաշրջանառության և ուղևորների փոխադրման ծավալի աճի մասին վիճակագրական տվյալներ: Ներկայացվել է նաև «մեկ պատուհան» ազգային ծրագրի առանձնահատկությունները, տնտեսվարողի և ընդհանուր առմամբ բիզնես միջավայրի գործունեության վրա դրա ունեցած դրական ազդեցությունը ապրանքների արագ փոխադրման և մաքսային ձևակերպումների վրա ծախսվող ժամանակահատվածի կրճատման համատեքստում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՀՀ մաքսային ծառայության պատվիրակությունը մասնակցություն ունեցավ նաև «Մաքսային ծառայությունը բիզնեսի և պետության համար» խորագրով լիագումար նստաշրջանին, որին մասնակցում էին ԵԱՏՄ անդամ-երկրների պատվիրակությունների ղեկավարները, ՌԴ ֆինանսների նախարար Անտոն Սիլուանովը, ՀՄԿ գլխավոր քարտուղարը, պաշտոնատար այլ անձինք: Նստաշրջանի ավարտին ներկայացվեց «Արտաքին տնտեսական գործունեության բարեխիղճ մասնակիցների Խարտիայի հավանության մասին Հայտարարությունը»:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ցուցահանդեսի ընձեռած հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու համար կողմերը պայմանավորվածություն ձեռքբերեցին քայլեր ձեռնարկել բիզնես-միջավայրին նմանատիպ միջոցառումներում ավելի շատ ներգրավելու, նրանց հետ անմիջական երկխոսություն հաստատելու ուղղությամբ:

10. Գործուղվողը՝

Սամվել Ավետիքյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

31.10.2017թ.